

# Պատմություն Գրապատկան

## ՕՐԱԳԻՐ

### Գաղափարական Գաղափարական և Գրապատկան

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՏՐԱԿՏ

ԳՐԱԳՈՒՄ

ՄԱՐՏ Թ. 25 (ՅՈՒՆ) 1841

#### ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

15 Յուլիս :

Աս վերջի օրերս քաղաքականութեան (փոքր թիւի) վերաբերեալ երևելի անցք մը չեղաւ մայրաքաղաքի մէջ . հիմնու հիմայ ամեն բան կատարեալ հանգստութեան մէջ է, ու խորհրդայն Գրանք գանձարան գաւառներէն առած լուրերը շատ հաճելի են, որովհետեւ կը ստուգեն թէ բարեկարգութիւնը և հանգստութիւնը հաստատուած են ան կողմերը ևս ուր որ խել մը չարագործ ու հաւատքի համար կայր նախանձաւորութիւն ունեցող մարդիկներ ջանք կրնէին որ խռովութիւնը և անկշտանութիւնը տարածեն :

Ասոր համար (ամանեան Տէրութիւնն ալ մեծ եռանդով ու գովելի խնամքով մը բոլորովն վերադառնալ է հիմակ, որ ալ աւելի հարկաւոր բարեկարգութիւններ մտցունէ ներքին կառավարութեանը մէջ, որպէս զի իր իշխանութեանը տակը եղած բոլոր ժողովուրդները հանգիստ կեանք վարեն ու երջանիկ ըլլան :

Ամուս 9 ին՝ Սահիտ պէյը գարանդինայէն ելաւ, ինչպէս որ ժամուցած էրք . հետեւալ օրը խորհրդայն Գրանք գանձարան և ուրիշ պաշտօնատարներուն այցելութիւն ընելու, ընկերութեամբ Սահիտ պէյին՝ որ Մէհմէտ Բի իմաշային ներքին քարտուղարն է : Ետո պատուով ընդունեցին զնա բոլոր մեծամեծ պաշտօնատարները :

Կից կի օրը Մերաքէր փաշային քովը դնայ, անկէջ նաւարանը (Թէրսիանէն) երթալով ինչ որ տեսնուաւ արժանի բան կար բոլորն ալ աչքէ անցուց :

Երեկոն օրն ալ պատիւ ունեցաւ Սահափաւ Մեքնակազին ներկայանալու, որ շատ քաղցրութիւն և մարգասիրութիւն ցըցուց անոր :

Անցած հինգշաբթի՝ 15 . Սահափաւութիւնը թօփթաբույի արքայական պալատին հիւանդանոցը այցելութիւն զնայ ու շատ հաճուցաւ անոր բարեկարգութեանը :

Հետեւալ օրը Բանաւուտ գեղը միկիթը երթալով անկէջ ուղղակի՝ Բարձր . Մեքնու Գեթհի փաշային ամարանոցը զնայ ու մինչև իրիկուն հոն կեցաւ . երբոր էտ կը դառնար իր պալատը, եղիպտական շոգինաւր՝ ինչ կոչաւ, իսկոյն զրօշակիւն լով դարգարաւ՝ քանք մէկ թնդանօթ նետեց :

Անգղիայի վաճառականներուն առևտուրը օր ըստ օրէ շարժուալ սև ծովու մէջ, Բնգղիայի տէրութիւնը Սանտոն քաղաքը ևս հիւպատոս մը դըրաւ, ուր որ մինչև հիմայ հարկաւոր սեպած չէր իր կրկնանէ զորձակալ մը խրիելու :

Մ . Գրին աւստրիացու ընդհանրական հիւպատոսը Եղեքանաղբիայի, գաղղիական շոգինաւու ճամբայ կիլայ ասոր որ նոյն քաղաքը երթոյ իր պաշտօնը վարելու համար :

Մ . Բոնիպուրկ առաջին Թարգմանը Կառտանդուսուրայ Բարտիայի դեսպանին, Հալէպու

հիւպատոս կարգեցաւ իր տէրութիւնէն :

Եղիպտական շոգինաւուր Սահափա կոչաւ, մօտ օրերս Վիքտորիա պիտի դառնայ, արարացի ձիեր ու լնդեղծ իւր (կերկետան) մը բերելու համար հոս, որոնք որ Մէհմէտ Բի իմաշան ընծայ կը խրիէ, Սորին Սահափաւութեան (ամանեան) խնամակարն :

Կրակ թէ՛ Սորին Սահափաւութիւն Սահափա փաշան, օգոստոսի վերջի օրերը պիտի մեկնի ասկէջ Գաղղիա երթալու իր դեսպանութեան պաշտօնը վարելու համար :

Պատերազմական շոգինաւուր անգղիացուց փոքր ֆէմիս անուն, ամուս 10 ին հասնելով բերաւ հոս Մ . Մաքնէյը անգղիացուց դեսպանը Պարսկաստանի, և Մ . Պարնէզ ընդհանրական հիւպատոսը Եղիպտոսի :

Երեկ Մ . Մաքնէյը շարունակեց իր ճանապարհը վերայիցալ շոգինաւու թօփթաբույի երթալու :

Ասկէ առաջ ժամուցինք թէ Կուլէլի Կաղարէթին մէջ քանի մը ժամուախտի դիպուածներ պատահեցան . բայց հիմայ կատարեալ մաքրուած ըլլալով՝ պարտինք շորհակալ ըլլալ Մուղղութեան հոգաբարձուին կանոնաւոր զուշուութիւններուն համար :

Մ . Բրիտտիտէսը՝ որ Յունաստան պիտի դառնայ, անցած շաբաթ օր Սահափաւ Եղիպտին ներկայացաւ, ընկերութեամբ Մ . Երկիրօբուլային որ հիմակու հիմայ անոր պաշտօնը պիտի վարէ :

Արասքին գործոց պաշտօնատար Բիքաթ փա

#### ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆԻ

##### Չինիմազինի աֆիօն քաշողները :

Երթալ Դ'օսլինը՝ որ քարտուղարի պաշտօնով անգղիացուց նաւատորմիցին հետ Չինիմազին խրիւրեցաւ, մտերս պատմութիւն մը հրատարակեց Լ'օստոա քաղաքը, անգղիացիներուն առջի պատերազմին վրայով շինացուց դէմ : Այս պատմութեանը մէջ կը կարգացի հետեւալ մասնաւոր պարագաները աֆիօն քաշողներուն վրայ :

« Ենկափորի մէջ շատ կերպ հետաքրքրական բաներ կան, որոնց մէկն ալ աֆիօն քաշողներն են : Սոսկալի տեսարան մըն է ասիկա, թէպէտ առջի անգամը զինով մարդուն պէս օրն որ իր մոլութիւնովը անասնոյ կերպարան կը մանայ, այնքան զգուսնք չի տար տեսնողին . բայց աֆիօն քաշողին թմրութեան մէջ քի ծիծաղ ըլլալը, ու անգղայ քնոտութիւնը աւելի գարշելի կրնէ զինքը քան

թէ զինովին տղեղութիւնը : Ամեն բանէն աւելի մարդուն գութը կը շարժի երբոր կը տեսնայ աս զբաւոր թոյնը որ զորձածողին այլանդակ կերպարանը, դեղնած երեսը ու մինչեւ աչքերը :

« Բաղաքին մէջ տեղը եղած փողոցը խիստ շատ աֆիօն ծախողի խանութներ կան . իրիկան դէմ երբոր ցորեկէն աշխատութիւններէն կը խալըտին, կը նային որ մէկ մեծ ըստմութիւն մը թշուառ չինացոց կը վազեն կուգան հոս, որ երևնց զգուսնք բաղձանքն լեցունեն : Ան սենեակներուն մէջ՝ ուր որ կը նստին ու աֆիօն կը քաշեն, տեսակ մը զիպտէ նատարաններ կան շորս գին, որոնք կը թընելու տեղ ալ ունին զլուսնին դրնելու համար : Աֆիօն քաշողին ծխաքարը յեղեգն (խալըշ) մըն է, որուն տրամագիծը մէկ ըմամատի չափ է . տվնեակին (լիւէյին) ծակը՝ ուր տեղ որ աֆիօնը կը դնեն, գնդակ (թօփուլի) գլխէն աւելի լայն չէ : Կերպարանը (էգան) քաղցրահոտ անուշիկեղծով կը պատրաստեն . ու թիշ մը լինելով կը լեցի ծխաքարը, որն որ մէկ երկու

անգամ քաշելուն պէս կը լըմնայ, ու անոր ծուխը սաստկութեամբ մը թոքին (ճերմակ ձիւրին) կանցնի, որպէս թէ Հնդկաց քուքան քաշած ըլլար : Կոր սկողն մը համար մէկ կամ երկու ծխաքարը բաւական չափ մըն է, բայց սորված մարդը կրնայ երկարատեն քաշել : Ամեն մէկ նատարանին գլուխը մէյմէկ պղտիկ կանթեղ կան, ուսկից կը վառեն իրենց ծխաքարը աֆիօն քաշելու առտննին . ու որովհետեւ շատ գոռարին է նորէն լեցընել ու ինչպէս որ պէտք է նէ բանեցընել, անոր համար միշտ մէկ սպասաւոր մը կը կենայ քաշողին մօտը : որ աս գոռարութիւններուն մէջը իրեն օգնէ :

« Այս զուրեղի զուարճութիւնը սորվողին քանի մը օր միայն բաւական է, թէ որ չափէն աւելի բանեցընէ, որ գէշ գեղնութիւն մը պատէ անոր երեսը, երկարատե հիւանդութիւն մը քաշողի պէս, ու աչքերը լացընէ . անանկ որ մէկ երկու ամբուսն կամ երեւմն ալ մէկ երկու շաբաթուան մէջ, խիստ պնդակաղմ ու քաջաոողը անձը՝ անմիտ մարդու մը կը փոխի, որն որ մեռելի ոսկորներէն ա-

շան և Բարձրագոյն դրանք առաջին թարգման Սալ-  
ֆէզ Էֆէնտին ներկայ գտնուող անոնց հետ :  
— Վրիժֆէմու շոգենաւով անդրադարձնալ ճարտարա-  
պետ մը եկաւ : որ կըսէ թէ Մեղրայի տէրութեան  
կողմանէ խրկուած է : անդրական դեսպանին պա-  
լատէ նորէն շինելու համար :

ԶՄԻՌՆԻՆ

25 Յունիս :

Հանդուցեալ Տէր Յովհանն Արժապետին Ռսկի  
Վար անուն գիրքին տպագրութիւնը կատարելու  
Սուրբ Կեսարիական մեր գաղտնի տպարանը : Յիշ-  
եալ չարաբերական աշխատակիցութիւնը որ շոյ-  
աստանին Ռսկի Վարուն այսինքն անմեղութեան ժա-  
մանակին վրայ զեղեցիկ ու բանաստեղծական ու-  
ճով կը խօսի : 470 երես է : ու թը ծալ մեծ թերթ  
աղբոր թղթի վրայ : կը յուսանք որ բոլոր ուսում-  
նասէրները փախագանօք պիտի գնոյ առնին առ նո-  
րատիպ գիրքէն : որն որ իզմիր Սուրբ Կեսարիական  
գաղտնաւորը : ու կոստանդնուպոլիս Վանա ալ-  
թիւն ճեպէլ աքտար խանը Բեշումալեան յարգի  
Վեորդ աղային գրատունը կը գտնուի : Յիշեալ  
գիրքին որոշեալ գինը 20 դուռուշ է տաճկի ըս-  
տակ :

Կարանքնք հայոց ազգին տպագրական արհես-  
տին տեղեակ եղող անձինքները : մանաւանդ կոս-  
տանդնուպոլսոյ երեւելի և վարդապետ տպագրատնե-  
րը : որպէս զի հաճեցային ներդրումը ըլլալ եթէ  
տպագրութեան վերաբերեալ շատ սխալանքներ ու  
պակասութիւններ կը գտնուին յիշեալ աշխատակի-  
ցութեան մէջը . բանդի յայտնի է ամենեցուն որ ա-  
սիկո երասխայի պտուղ է նորահաստատ մեր տպա-  
րանին . յոյսերնիս հաստատ է : որ քիչ ատենին մէ-  
ջը թէ՛ Սուրբ Կեսարիական գաղտնի տպարանը և  
թէ՛ Արշալոյս Արարատեանին տպարանը ալ աւելի  
կատարելագործութիւններ պիտի ստանան : ու առ  
բանին համար ըստ ամենայն մասին ձեռքիցնէս ե-  
կածին չափ աշխատելու ենք հայոց ազգին պայծա-  
ռութեանը համար :

Անշուշտ ուշացանք յայտնել բարեսէր հասարա-  
կութեանը մեր խորին երասխագիտութիւնը որ կը

պարտաւորինք թրեւտու աղնուական Վեբեան Վը-  
րիգոր աղային իրեն պէտքէս բարերարութեանցը ու  
ազգասիրութեանցը համար . որոնց շնորհքը անդա-  
դար կը վայելնէր հայազգի զմեռնացիքս : Սակայն  
առաքինութիւնը ըստ ինքեան գովելի ըլլալով : ա-  
նոր բարի համբաւը շուտով ամեն տեղ կը տարած-  
վի . անոր համար չունի կարօտութիւն մեր տկար  
հրատարակութեանը : Բայց և այնպէս նախանձա-  
ւորութեան բարի օրինակ ըլլալու համար : պարտք  
կը համարենք մեզի հրատարակու շնորհակալ ըլ-  
լալ յիշեալ Վեբեանին գովելի ու շնաշխարհիկ  
ազգասիրութեանը :

Քանզի կրնանք հաստատել թէ զմեռնացի հայ-  
երուն ունեցած բանասիրական եռանդը : վարժա-  
բաններուն բարեկարգութիւնները և ուսումնական  
քիչ շատ յառաջադիմութիւնը ըստ մեծի մասին ա-  
նոր բարեսէր հոգորութեան ու ազգու յորդորանացը  
շնորհքն է . մանաւանդ Սուրբ Կեսարիական տպա-  
րանին բարեկարգ գործադրութեան պատճառը նոյն  
ինքն յիշեալ Վեբեան է . որ յորդորեց մեզի ազգասի-  
րաբար : որպէս զի աշխատութիւնը յանձն առնելով  
տպել տանք վերոյիշեալ Ռսկի Վար ըսված գիրքը  
իր յատուկ ծախքովը : որն որ արդէն ՚ի լոյս ընծայ-  
եցաւ ինչպէս վերոյիշեալ անձինքն է . որուն հեղի  
նակին հանդուցեալ Տէր Յովհանն Արժապետին  
վրայ ալ մանաւոր խնամք մը ունէր ըստ ամենայն  
մասին : Վայն ինձամբը : կը յուսանք թէ : անոր ժա-  
ռանգներուն վրայ ալ հովանի կը ըլլայ միշտ . որով  
հետեւ արդէն իր մարդասիրութեան նշանը ցոյց տը-  
վաւ նորատիպ Ռսկի Վար գիրքին բոլոր օրինակնե-  
րը անոնց ընծայելով :

Արշալոյս Արարատեան ներկայ մեր օրագրու-  
թեանը հաստատուելուն ու առ աստիճան ամեն տեղ-  
յարգութիւն գտնուելու սկզբնական պատճառը մի թէ  
նոյն ինքն յիշեալ աղնուական ազգասէրը չէ՞ մի : որ  
ամեն կերպիւ անդադար հոգ տանելով անոր ազգ-  
օգուտ յառաջադիմութեանը համար հարկաւոր եղած  
խնամքը միշտ պակաս չի ընէր . յորդորելով ազգա-  
սիրաբար և ուրիշ զմեռնացի մեծապատիւ հայ-  
ազգի աշաները : որ թրեւտ կը բնակին հիմակ .  
թէպէտ և անոնց գովելի հայրենասիրութիւնը յոր-  
դորանքի կարօտութիւն չունի : որովհետեւ երբոր  
աղբին պայծառութեանը համար գործ մը հանդիպե-

լու որ ըլլայ : սիրով կը կատարեն :  
Ստեբլով սրտիւ կը բարեմաղթենք : որպէս զի  
նոյն ազգասիրութեան և միաբանութեան հոգին կոս-  
տանդնուպոլիս ըլլող մեր բաղնաթիւ հայերուն մէջ  
ալ ևս առաւել տիրէ : որով անշուշտ քիչ ատե-  
նէն ետքը մեր ազգն ալ լուսաւորեալ ու բարեկիրթ  
ազգերուն կարգը կանցնի : ալ աւելի յարգ ու համա-  
րում ունենալով անոնց մօտը :

Մեծապատիւ Սարգսեան Յակոբ ազն առ շո-  
բաթ իրեքշաբթի օրը իր վերժարանին մասնաւոր  
բաղնաթիւն ընելու գնաց . ուր տեղը եղած  
հարուր յիսուն հոգիի չափ աշակերտութեան ըստ  
կարի յառաջադիմութիւնը ու զպատուներն ըստ ա-  
մենայն մասին բարեկարգութիւնները տեսնելով  
շատ ուրախացաւ : Վաղասիրական գերատնօն հո-  
գիէ մը շարժելով հաճեցաւ նոյն ինքն ամեն մէկ  
աշակերտութիւն ձեռագործ բանվածքը : կարգու-  
ու գիրք նայիլ ու ամենուն ալ ըստ արժանեցն ըն-  
ծայ տրվաւ : մէջերնին բարի նախանձաւորութիւն  
ձգելու համար : Վանասպէս վարժապետին ու վար-  
ժապետուհիին վայելուց պարգևներ շնորհելով յոր-  
դորեց : որպէս զի ալ աւելի հոգ տանին աշակերտու-  
հիներուն յառաջադիմութեանը համար :

Յիշեալ մեծապատիւ Վաղային իր հայրենակից  
ներուն համար բրած մարդասէր ու շնաշխար-  
հիկ բարերարութեան շնորհակալութիւնը ու-  
րիշ կերպիւ չենք կրնար հասուցանել : բայց միայն  
բարեմաղթելով վերին Վախախնամութեանը : որ  
երկար ու խաղաղաւետ կեանքով միշտ յաջողութեան  
մէջ անխորձ ու անսասան պահէ զնա :

Նորին Ստեմութիւն Սահու փաշան Վ. յորնի նոր  
միւշիւրը : անցած ուրբաթ օր կոստանդնուպոլիսին  
եկաւ : Վաղաքիս պատնէշներէն և նաւահանգիս-  
տը գտնուող եւրոպայի պատերազմական նաւերէն  
սղջունեցին զանկա թնդանօթներ նետելով :

Վրոյի ընկերութեան աւստրիական շոգենաւ  
որ ամսուս 12 ին Սիրա պիտի հասնէր թրեւտի նա-  
մակներովը : դեռ չի հասած ան կողմն մեքենաները  
մեծ վնաս կրեր են . ուստի մէջի եղած ինչքը և  
նամակները՝ անգղիացոյ շոգենաւորուն մէկը Բաղ-  
րաս տարեր է : ուսկից յունաց կառավարութիւնը  
վրան տուած է ան բաները իզմիր և կոստանդնուպո-  
լիս խրկելու :

Չորեքշաբթի օր՝ մեր ազգի երեւելիներէն քանի  
մը անձինք : ինչպէս և սրբազան Վաղայնորդին կող-  
մանէ ալ պատուաւոր քահանայ մը : Վ. Ս. Վ. Ս. Ս. Ս.  
Եւրոպայի երրորդ ծովապետ պարուն տի Պանտի-  
ուային այցելութիւն գացին կայսերական Փրէկաթը  
Վեհուէ կոչւած : շնորհակալ ըլլալու անոր՝ բոլոր  
իզմիրու հայոց ազգին կողմանէ : որ այնքան մար-  
դասիրութիւն և խնամք ցոյցուց քաղաքիս բնակչա-  
ցը : այն ստակի կրակը մարտելու աշխատելով : մա-  
նաւանդ հայոց թաղը ազատելու համար : որն որ  
անշուշտ միտիւր կը դառնար : թէ որ յիշեալ ծովա-

ւելի չափեր :  
“Մեծապատիւ Ստեմութիւն Սահու փաշան և շար-  
ժարանք կը կրեն առ թշուառները : թէ որ մէկը ուղիւ  
ըլլայ հրատարակելու գտնուող ան նողկալի մղութիւններ  
որն որ շատ տարւոնէ ՚ի վեր սովորութիւն ըրած են իրենց .  
ու առ ալ անատներ միայն կրնայ ըլլալ : երբոր ան աստի-  
ճանի մէջ կը գտնուին որ կարծես թէ կենսական զօրու-  
թիւնն կըսկըտի արթննալ ու խելքերնին գլուխնին  
կուգայ :  
“Իրիկան գեմ” ժամը 9 ին , իրենց կորստեանը համար  
չինուած աներուն մէջ կը տեսնաս առ թը շուտ մարդիքը  
մեծ բազմութեամբ , ամեն մէկը մէկմէկ տարբեր վիճակի  
մէջ , որոնք ափսոսին գիտութեանէն առաջ կուգան :  
Ոմանք ալ խենթի պէս կուգան իրենց արտօրակային  
լեզունը , որուն որ շատ մեծ աշխատութեամբ նոյն օր-  
ւան մէջ այնքան համբերութիւն ըրած են : Ոմանք տա-  
կաւին առջի ծխաբարձով գլուխնին տարցած ըլլալով  
կը ծիծաղին ու արեւոյսի գուրս կը թափեն . ոմանք

ալ անոնց մօտիկ նստարաններուն վրայ պառկած են  
անշարժ յետին թմրութեան մէջ ու քմծիծաղ . այնքան  
ներդործեր է անոնց ափսոսը՝ որ ամենին չեն կրնար  
տեսնալ իրենց բոլորաբար եղած բաները : այլ կը մնան  
այնպէս իրենց գարշելի զուարճութեանը մէջ ինչւան  
վիզերնին թաղած :  
“Վրոգեալի վիճակին վերջի տեսարանը հասարակօրէն  
տրնէն բաժնուած առանձին սենեակի մը մէջ կը ըլլայ , որն  
որ արժանապէս տուն մեռելոց ըսել կը վայել . ուր տեղ  
Եւելի նման կը պառկին անշարժ մեծ թմրութեան մէջ  
ընկածները , որն որ յախտնական քնոյ օրինակն է ,  
որուն պիտի հանդարտին օր . առաջ , որովհետեւ իրենց կոյր  
կիրքը չեն կրնար զսպել :

(Ստեմութիւն Սահու) :

ԿԻՐԻՏ

պետին ներկայութեամբը և սիրտ տալովը իր մար-  
դիքներուն, կրակին առջևը չառնուէր: Բարե-  
սիրտ ծովապետը շատ սիրով ընդունեց Իզմիրու  
հայոց ազգը ներկայացրեցող յարգելիները: շնորհա-  
կալ ըլլալով անոնց երախտագիրութեանը և քա-  
ղաքավարական վարմունքին. ու ետ դառնալով ա-  
տենը՝ իրեն յատուկ փառաւոր նաւակովը ցամաքը  
խրկեց զանոնք: արտուաւոր օֆիշիալի մը ընկերու-  
թեամբ:

Հետեւեալ օրը՝ զաղղիացեաց Բախտիատ անուն  
պաշտօն ճարտարներն ևս քանի մը յարգի անձինք  
և քահանայ մը շնորհակալութիւն տալու զայցին.  
ան ալ պտուտով ընդունեց զայցողները: ու մեծ հա-  
ճութիւն ցրցուց Իզմիրի հայազգի բնակչաց դի-  
րազգած բնաւորութեանը վրայ:

Անցած շաբթովն ասհագին հրկիզութիւնէն վը-  
նաս կրօղ զժբաղդ հայերուն օգնութիւն ընելու հա-  
մար: քաղաքիս հայոց հոգաբարձուներէն քանի մը  
հոգի աշխատութիւն յանձն առին մարդասիրաբար:  
ու արժանաւոր տեղանք անձամբ երթալով բիչ  
շատ ստակ ժողկցին: Բայց այն դումարը խիստ  
բիչ ըլլալով կարօտ անձինքներուն վնասին համե-  
մատութեամբ: անոր համար կը համարձակինք յոր-  
գորդ Արտանդուաբույս մեծմարտիւ Բմիրաները  
ու երեւելի Բղաները որ հաճին մասնակից ըլլալու  
աս բարեգործութեանը: որովհետեւ ազգը միտք ունի  
խիստ չքաւորներուն ու տնանկներուն տունները կամ  
խանութները շինել տալ: Արտանդուաբույս աղ-  
գապետ Բմիրաները ու Բղաները շատ պարագանե-  
րու մէջ իրենց ազգասիրութիւնը ցրցուցած են.  
ուստի կը յուսանք որ աս զժբաղդ առիթին մէջ  
ալ մեր արժանաւոր գովութեանը ու շնորհակալու-  
թեանը իրաւունք կըտանան:

Ի՞նչ ըսված յունարէն օրագրութեան մէջ՝ Թիւ  
275, հետեւեալ յօդուածը կը կարդանք:

Թիւ 13 Յունիս:

« Ինչպանք որ՝ անգղիացեաց դեսպանը Յունաստա-  
նի յայտարարութիւն մը խրկեր է հելլենական կա-  
ւաւարութեանը: Եւ օնուայու արտաքին իրաց պաշ-  
տօնատար Երօտ Բալթիսթիսի հրամանաւը: որով  
կը ծանուցանէ թէ: անգղիական կաւաւարութիւնը:  
որ շատանցիմ (Սանտեան հերութեան ամբողջու-  
թեանը ու հաստատութեանը համար հոգ կը տանի):  
չի կրնար հիմակ աղէկ աչքով տեսնալ կիրխու-  
ապատամբութիւնը. և թէ իր դաշնակցութիւնը  
Բարձրագոյն Գրքանը հետ: կը պարտաւորէ զինքը  
ամենեւին օգնութիւն չտալ ապտամբներուն: որոնց  
համար ուրիշ բան չի կրնար ընել. բայց մի այն  
պաշտպանել անոնց. կրնաքը պատիւը: ու ստաց-  
ւածքները: Եւ ի՞նչ իզատ կը ծանուցանէ: Թէ անգ-  
ղիացի հերութիւնը տարմուտեամբ կը տեսնէ բար-  
ձրագոյն Գրքան ու Յունաստանի մէջ եղած անմիա-  
քանութեան պատճառները: ու կը խրատէ շիւր-  
նական կաւաւարութիւնը որպէս զի զաղբի ասկէ  
ետքը դանդաղանաց առիթներ տալու: որովհետեւ  
յիշեալ երկու տերութեանց մէջը վեճ մը ըլլալու  
ատենը: Անգղիացի հերութիւնը չի կրնար ասկէ  
ետքը միջնորդութիւն ընել բարեկամացընելու հա-  
մար զանոնք:

Գաւտիա . 7 յունիս: Ապտամբութիւնը վեր-  
ջանալու վրայ է. այժմ միայն քանի մը հաղար հո-  
գի մնացին՝ որոնք փախած են Սֆաքեայի լեռնե-  
րուն վրայ. մնացեալները բոլորն ալ տեսնալով որ  
սատիկ կը ջարդըվին: զէնքերնին վար դնելով հը-  
պատակեցան: Ա իրջին կախներուն շատ զժբաղ-  
դութիւն ունեցան ապտամբները: և մէկ ժամի չափ  
ալ կարող չեղան (Սանտեան զօրաց զէմ կենալու:

Աս ողբմովի գործին այքան երկարելուն պատ-  
ճառը ուրիշ բան չէր՝ բայց Թահիր փաշայի մաս-  
նաւոր խնամքը. վասն զի թէ որ նա ուղէր կրնար  
շուտով վերջացընել: ահամայ հաղանդեցընելով  
ապտամբները. բայց Բարձրագոյն Գրքանը հրա-  
մաններուն համեմատ չափաւորութիւնը ձեռքէ չի  
ձգելով՝ մեծ մարդասիրութեամբ վարվեցաւ անոնց  
հետ: Եւ որ համար ամենէ մարդ բարկացած է ա-  
պտամբներուն վրայ՝ որ յանգղեցան կերպ կերպ  
չարախօսութիւններ ընել անոր համար: Եւ հիմայ  
յայտնի երեցաւ որ Թահիր փաշան թէ որ ուղէր  
պատժել զանոնք՝ չէ թէ անանկ անգղութիւն կը-  
ներ ոյն որ համարձակեցան անոր վրայ խօսելու:  
այլ անոնց տէրութեան զէմ ըրած ապերախու-  
թեանը փոխարէն արդար անաչառութեամբ կրնար  
բնաջինջ ընել զանոնք. բայց ուղէց որ՝ Կորին Ա-  
հափաւութեան կամը կատարելով արիւնհեղու-  
թիւն չընէ. և ջանք ըրաւ որ աւանց բունութեան  
համողելով և քաղցրութեամբ վարվելով հաղան-  
դեցընէ ապտամբները:

Այսու ամենայնիւ անանկ կը կարծուի որ Թա-  
հիր փաշան որոշած է վերջացընելու աս գործը.  
և այս ալ կրտնէ թէ խորհուրդ ըրեր է Սուլտանաֆա-  
փաշային հետ՝ որ ամէն կողմէն ապտամբներուն  
վրայ յարձակին և շարաչար զարնելով զանոնք բնա-  
հանգստութիւն չի տան՝ մինչև որ յոյտերնին հա-  
տած հաղանդին: Եւ բանը իմանալով ապտամբնե-  
րը իսկոյն օտար տէրութեանց պատերազմի նաւերը  
մարդ խրկեցին որ կը կենան Սուլտայի նաւահան-  
գիստը. և աղաչեցին նաւապետներուն որ օգնեն  
իրենց. անոնք ալ առջի բերանը թէպէտ ուղեցին  
միջնորդութիւն ընել: բայց ապտամբները անանկ  
խօսքերու անանկ բաներ պահանջեցին որ նաւա-  
պետները չընդունելով անոնց խնդիրքը՝ ետ կե-  
ցան միջնորդ ըլլալէն: Եւ անանկ կը կարծուի որ կրկին  
պիտի օգնութիւն կանչեն նաւապետները չափաւորե-  
լով իրենց խնդիրքը:

Աս օրերս ձայն մը ելաւ քաղաքին մէջ թէ յու-  
նաց նաւերը որ քանի մը ատենէ՛ի վեր կը տեսնուիին  
աս ջուրերը հարը գտեր են հաղորդակցութիւն ը-  
նելու սպտամբներուն հետ: և անոնց օգնութիւն  
կրնան. բայց աս լուրը թէ և իրաւ ալ ըլլայ հոգ  
չէ. վասն զի ապտամբները անանկ վիճակի մը հա-  
տած են որ աս կերպ օգնութիւններով հաղու կարող  
են քիչ մը երկարելու իրենց ընդգնութիւնը:

Հիմակու հիմայ Սուլտայի նաւահանգիստը իրեք  
հատ Բնագիայի պատերազմական նաւեր կան. Պէմ-  
պո կողմած մեծ նաւը: Թին անուն Փրէկաթը և  
Վեսիվուս շոգեւաւը. երկու հատ ալ Վաղղիա-  
կան Փրէկաթներ կան Վէնէրով և Նարոմու. Տիտոն  
անուն Փրէկաթը ասոր մէկնեցաւ. Թուրան երթա-  
լու:

Մեր յարգի թղթակիցը Պոմպոյու իր մասնաւոր  
նամակովը անցած ամսու 19 ին գրված, հետեւեալ  
ըրերը կուտայ մեզի:

ՉԻՆԱՐԱՉԻՆ

« Արդէն լսած էք որ չինացեաց և անգղիացեաց  
մէջը եղած խռովութիւնը նորոգված է: որուն պատ-  
ճառը չինացեաց խաբէբայութիւնը եղաւ:

« Դեռ կարեւոր լուր մը չառնիք ան կողմերէն:  
որով յայտնի է թէ յիշատակելու արժանի բան մը  
եղած չէ տակաւին. բայց պատրաստութիւնները  
նոր խռովութեանը համար միշտ կը շարունակվին:

« Բոմբոտոր Պրէմէրը հեռացաւ Կալիպթայէն 26  
մայիսի: Բ. Թին ըսեալ շոգեւաւով: մէկ ամիս ան  
քաղաքը սպասեցին ետեւ. ու այնքան ժամանակի մէջ  
նոր պատերազմի համար հարկաւոր եղած պատրաս-  
տութիւնները կատարեցան յիշեալ Բոմբոտորին  
անխնջ ջանքովը:

« Ստորասու մէջը եղած գործքերն ալ ըստ բա-  
ւականին առաջ զայցած են. Պէրս և (Կալիպթոնի  
տեղակալը հրաման առած են քանի մը մասնաւոր  
զունդերու հետ երթալ ու ջուրերը կոչած ար-  
քայական նաւը մտնալ: Եւ իբրեւ հաղորատու  
պիտի հրամայէ Ստորասու զօրքերուն՝ Չինացիների  
մէջ:

« Ամիրալ Սըր Ուելլէմ Պլարկը Պոմպոյու հա-  
տած չըլլալով՝ որովհետեւ Սուեզ է ու շոգեւաւ կը  
սնրան: հարկ եղաւ Պոմպոյու նաւահանգիստին ձաւ-  
բայ ելալը յապաղել: Ստորասու կոչած շոգեւաւը  
և ուրիշ երկու երկաթեղէն շոգեւաւ Երան անու-  
նով պատերազմական նաւուն հետ պատրաստ են  
ձաւբայ ելալու. չենք կարծեր թէ սակից ալ զօրք  
խրկուի: վասն զի հաղու թէ կը ներէ: աս կողմերուն  
կայութիւնը նաև Պոմպոյէն զօրք խրկելու:

« Դեռ ստոյգ չենք գիտեր թէ ինչ ընթացք պիտի  
ունենան զօրքերը երբոր Չինացիներ հասնին: ու  
պէտպէս կարծիքներ կան աս բանին վրայ: Կալիպ-  
թայու օրագրութիւնը շրկաբայ կոչած կը ծանու-  
ցանէ թէ՛ առաջին գործը որ միտքերնին հաստա-  
տած են: Բ. Թին կողմէն վերստին առումը պիտի  
ըլլայ. և որովհետեւ մէկ յարմարաւոր տեղ մը զօր-  
քերուն շոգեւաւանին համար խիտ հարկաւոր է:  
հաւանական կերեւայ աս բանը: Աւրիշները՝ ասոր  
ներհակ կը հաստատեն թէ ամեն զօրքերը պիտի  
միաբանին ու իսկոյն յարձըրկուեն են Պիֆիկայ մայ-  
լաքաղաքին վրայ:

ՆԻՊՍՆ

« Հաւանական կը թուի թէ քիչ ժամանակէն  
ետքը պատերազմ պիտի ծագի անգղիացեաց և նի-  
պալացեաց մէջ: որովհետեւ նորոգած են ասոնք ի-  
րենց առջի ելուզակութեան սովորութիւնը: անգղե-  
ացեաց սահմաններուն մէջը:

ՓՐԵՆՉԱՊ

« Աս երկիրը՝ խռովութեան և անկարգութեան  
վերջին աստիճանը հասած է: Թէպէտ Սահարա-  
ջայն և իր պաշտօնատարները ջանք կրնան կարգ և  
կանոն պահել զօրոց մէջ: բայց դուր տեղը կաշխա-  
տին. մինչև հիմայ չի վճարված թոշակնին տալով

ու համոզելով զանոնք ընծաներով: մեծ անկարգու-  
թեան մէջ ձգած են իրենց զօրքերը: Եւստակիե-  
րու խումբեր զբաղած են ամեն տեղ յախշտակու-  
թիւն ընել, երկրին բերքերը աւերել ու գեղերը  
այրել:

ՉՆԵՆՈՒՆ ԼՈՒՐՆԵՐ

Քաղաքիս հրկիզութիւնը կոտորածնուպօլիս լըս-  
ւածին պէս՝ Վեհափառ Երբան խոյն հրաման  
ըրեր է Բարձրագոյն Իրանը պաշտօնատարներուն  
որ աս աղետալի զիպուածին զոհ եղած ողորմե լինե-  
րուն օգնութիւն ըլլայ: Ուստի Տէրութեան կողմա-  
նէ հարիւր յիսուն հազար զուռուշ բերաւ հոս  
Քրէշէնդ շոգենաւը, ու քսանը հինգ հազար օխայ  
այլեր, կարօտելոց բաժնելու համար. և ինչպէս  
կը հաստատեն արժանահաւատ անձինք, ուրիշ ա-  
ւելթով ալ մայրաքաղաքէն օգնութիւն սխտի գայ  
անոնց:

Ըսկէց զատ՝ Ս. Լանկոնը և Ս. Լանսըն քա-  
ղաքիս երևելի վաճառականները, որոնք կոտորած  
զնուպօլիս դային անցած շաբթու, յատկապէս ու  
զարմութիւն ժողովուրդ կրակէն վնաս կրող խեղճե-  
րուն համար, շատ սիրով ընդունել են զանոնք բո-  
լոր եւրոպացիները, մանաւանդ Ս. Լէօն և Ս.  
Կլափանի անւանի վաճառականները, ու խոյն  
սկսեր են ձեռնտու ըլլալ անոնց դրամ ժողովուրդ  
համար:

Պէ՛յ օղու Սա.գ.ա Մարիա եկեղեցւոյն կից վան-  
քին մէջը ժանտախտի զիպուած մը պատուհներ է,  
բայց աւողջութեան հոգաբարձուն շուտ մը հար-  
կաւոր եղած զբուշութիւնները ըրեր է, հիւան-  
դութեան առջը առնելու համար:

Ըս պատճառով՝ կոտորածնուպօլիսէն եկած  
Քրէշէնդ շոգենաւը քաղաքիս հետ հաղորդակցու-  
թիւն ընելու հրաման չունեցաւ:

Ընցած շաբթուան կրակէն երված աներուն,  
խանութներուն և՛ ստոյգ թիւը իմանալով, կը  
փութանք հասարակութեան ևս ծանուցանել:  
4000 տուն, 2000 խանութ, 10 միլիթ,  
29 մէսճիտ, 7 սինաւուն, 13 բաշիք:

Կիրիսու վերջին լուրերը կը հաստատեն թէ՛  
գլխավին վերջացեր է ան կղզիին ապրտամբութիւ-  
նը. վասն զի Սփարիացիները ևս չսղանդէր են  
(Օսմանեան Տէրութեանը):

Ընտու 16 ին՝ անդղիական Ֆրէկաթ մը և դոր-  
վէդ մը Սիրս հասեր են քանի՛ մը ապրտամբներու  
զլխաւորներով և 200 հեղինայիններով, որոնք կի-  
րիտ գայած էին օգնութիւն ընելու, ու հիմա՛լ Ը-  
թէնք կը դաւնան եւրոպական նաւերով, որովհետեւ  
փութանոցը աշխատեցան:

ԱՌՆԻՏՐԱԿԱՆ ԼՈՒՐՆԵՐ

ԸՆԳՂԻՆ

Ի իջրջիւր. 1 յուլիս 1841:

Քաղաքիս առու որը հասարակօրէն արթննալու  
վոյց է ու օրէ օր բարի փոփոխութիւններ կը լլան ապրա-  
նաց գիներուն վրայօր:

Ըսմ լակ: Քանի մը շաբթ է որ շատ կուզի. ու  
թէ՛ գէ ու բուսական ապրանք կայ քաղաքիս մէջը, բայց և  
այնպէս առջի գիներէն կէս փէնս ալ աւելի վրան դրաւ.  
որովհետեւ Սէնթէստրի գործատուները խիստ շատ կը  
բանին ու անկէ եկած ձեւապօրծ ապրանքները իսկոյն կը  
ծախսին. աս պատճառով կը յուռնեթ թէ բամբակները  
ասկէ ետքը ալ աւելի ուղցելու են:

Շէ՛հրի: Աւ ապրանք 13 յէլինի կը մտ աւելի հըն-

աղբեմութիւնը, բայց թուէ. որովհետեւ շատ ձէ՛հրի  
կայ ու ապրանք ունեցողները ծախելու կարօտութիւն  
ունին:

Տորոն (քէօք պոյս): Ընցած շաբթուան մէջ է, ու 48-  
49 յէլին գինը անուճով միայն է, ամուղ չի կայ. 3000  
պախայէն աւելի սորոն կայ քաղաքիս մէջը. թէպէտեւ  
Լ իջրջիւրի համար շատ բանէք, բայց ապրանքը թուլ  
ըլլալուն համար, յիշեալ դաւնարը խիստ շատ կերակի:

Ըսորդ: Ըծառայի լուրերը լուր ըլլալով, հոս ալ շատ  
վաճառականներ ծախու առնելու սկսեցին, անոր  
համար գիները հաստատու են հիմա՛լ, ու կը յուսացի թէ  
ալ աւելի կուզի աս ապրանքը:

ԳՆՂՂԻՆ

Մարտիլիս 9 յուլիս:

Ըսմ լակ: Ըսուէ. Սօպուճա ի լու տեսակ ապրանքը  
միայն զիբրտութեամբ է:

Սևառք: Ըս շաբթ 125 պախայի շափ վաճառվե-  
ցաւ. Իրևանէքը գէշ չէ աս ապրանքին վրայօր. առջի  
գիները կը յուսանք թէ կը բարձրանն, բայց բարձրնալու  
ալ չըլլան, հասարակօրէն կը կարծրի թէ չեն իջնար:

Շէ՛հրի: Ընց-գետե դուրսերէն գնոյ առնելու հրաման  
ներ կո. դան, բայց 2 1/2 թանքէն աւելի գին չեն իտար  
կէս բիտկորմին հոս ուր. ապրանք ունեցողները 2 1/2 կու-  
ղին, բայց չենք յուսար որ կրնան ստանալ յիշեալ գինը:

ԶՄԻՌՆԱ

25 Յուլիս:

Ընցած շաբթուան հաղին հրկիզութեան պատճառ-  
վը գրեթէ փոփոխութիւն մը չեղաւ քաղաքիս առու-  
տուրներուն վրայօր ու նշանաւոր գործատուութիւն մըն  
ալ չեղաւ:

ԱՐՇԱԼՈՅՍ ԵՐԵՎԱՆԵԱՆ, աս Օրագիրը  
շաբթու անգամ մը կը արպզի:

Տարեկան ստորագրութեան գինը՝ 120 զուռուշ է,  
կանխիկ. ով որ ուզէ կրնայ ստորագրվել:

Իզմիր՝ օրագրութեան ապրանք:

Պէ՛ս՝ Վէլիբ խանը Իշմիրցի Սաւալանեան Դաւիթ  
աղային գրատուներ:

Պուրսա՝ Քապուքճեան Մատթէոս ու Գրիգոր աղայ-  
ից մաղաղան:

Ընթերանդիս՝ Ըղաղանեան Կարապետ աղային մա-  
ղաղան:

Տոպպէ (Լաֆա) մեծապատիւ Մուրատ Ըղայի  
գրատուներ:

Թրեսո՝ Ըրևան Գրիգոր աղային գրատուներ:

Իջրջու՝ Տակորճանեան աղայ Մարգարէն մաղաղան  
Ըն՝ Քարիկեանց Տարութիւն աղային մաղաղան:

Տիարպէրի՝ Պարօն Դամիանոսին մաղաղան:

Ըսա՝ Պըրքընեան աղայի կըրարց մաղաղան:

Պաշտատ՝ Ընդղիոյ առաջին թարգման աղայ Խա-  
չիկին սուներ:

Պարթէ՝ Ըլանեան Կաղարեանց Տակոր աղային  
վաճառատուներ:

Պուրսա՝ յարի պարոնաց Ըղանուր որդոց և ընկե-  
րաց վաճառատուներ:

Ս՛վ որ ուզէ կրնայ մասնաւոր բան մը տպել՝ տալ Ըր-  
աւոյս Ըրարաւանին մէջ՝ 40 փարայ հասուցանելով  
ամեն մէկ սողին համար. թէ որ տրպիւնու բանը արժա-  
ւոր համարի օրագրութեան վերատեսուչը:

Ի ՏՊՐԵՆԻ ԱՏԵՓԵՆՈՍԻ ՊԸՊՈՆԵՆ:

ՅԵՅՏԵՐԵՐՈՒԹԻՒՆ

Ճանապարհորդներուն, ապրանքներուն, գիրերուն, և ուրիշ բաներուն, որոնք Ըստրիացի Լցատի  
ընկերութեան շոգենաւերով փոխադրուեցան 1840 տարւան մէջ:

Ճանապարհորդութեան թիւը:	Ճամբորդ- ներուն թիւը:	Ըսած վարձը Ֆիօրին:	Գիրերուն թիւը:	Լցարանք		Պզտիկ կտոր ապրանքներուն թիւը:	
				Պախանե- րուն կամ մտութիւր:	Ծանրու- թի վէճի խանթար:		
24	Ճանապարհորդութիւն Թրեստու և կոստան- զնուպօլի մէջ:	9661	3,529,527	87,396	25,629	38,359	7206
22	Ճանապարհորդութիւն կոտորածնուպօլի վ. օ- լոյի, Սէրիսի, Ըղէք- սանդրիայի և Ըստրես- տանի մէջ:	9465	220,507	2162	1558	2416	485
155	Ճանապարհ. Թրեստու և Վենիսի մէջ:	15053	8,077,884		5786	9199	10,892
20	Ճանապարհ. Թրեստու և հարնայի մէջ:	2569	508,903		1555	2047	3168
64	Ճանապարհ. Թրեստու Ընթանայի և ուրիշ նա- ւահանդիսաներու մէջ:	5138	213,826	2351	559	1364	230
285	Ճանապարհորդութիւն 1840 ին:	38886	12,550,647	91909	35087	53385	21681
245	" 1837 ին:	27930	10,963,126	79812	23251	40366	15561
40	" աւելի 1840 ին:	10956	1,587,521	12097	11836	13019	6120